ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի

28.02.2012թ. –N141-Ա/Ք հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

<<ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>

ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

(8-9-րդ դասարաններ)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

<<ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>
ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ
(8-9-րդ դասարաններ)

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Հասարակագիտության առարկայական չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել <<Կրթության մասին>> ՀՀ օրենքը, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը և Հանրակրթության պետական չափորոշիչը:

Հասարակագիտության չափորոշիչը ներառում է՝

- հասարակագիտության հայեցակարգը (որում ներկայացված են այն սկզբունքները, հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր ունեն հանրակրթության բովանդակության մեջ առարկայի դերն ու գործառույթները որոշելու և չափորոշչին ու ծրագրերին համապատասխան դասագրքերը, ձեռնարկները և այլ ուսումնական նյութեր մշակելու համար),
- առարկայի ուսումնական նպատակները,
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը,
- ուսումնական գործունեության տեսակները, որոնք ուսուցման գործընթացում ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել և կիրառվել ուսուցչի կողմից,
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները (ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երկու՝ Ա և Բ մակարդակներով):
- գրականության ցանկ:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ <<Հասարակագիտություն>> առարկան <<Հասարակական գիտություններ>> ուսումնական բնագավառը ներկայացնող պարտադիր ինտեգրված առարկա է հիմնական դպրոցի 8-9-րդ դասարանների և ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների համար:

<<Հասարագիտություն>> առարկայի հիմնական նպատակը մարդու և հասարակության վերաբերյալ գիտական պատկերացումներ ունեցող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացու ձևավորումն է: Առարկայի կարևոր նպատակներից է նաև սովորողի կողմից անձնական, հասարակական և ազգային շահերի միասնության, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործում սեփական մասնակցության, մարդկանց միջև հավասարություն, արդարություն, հանդուրժողականություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության, գենդերային հավասարության և հասարակության մեջ սեռային խտրականության բացառման կարևորմանը:

Առարկան պետք է ներառի գիտելիքներ՝

- Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային ոլորտների մասին.
- մարդու հիմնարար իրավունքների, ազատությունների ու քաղաքացիական հասարակության մասին.
- հասարակական վարքի նորմերի, կանոնների, սովորողների իրավունքների ու պարտականությունների մասին.
- հասարակական և բնական երևույթների փոխկախվածության, աշխարհի միասնականության և բազմազանության մասին:

Հասարակագիտությունը պետք է ձևավորի մարդու աշխարհայացքը, մտածելակերպը, արժեքային համակարգը, վերաբերմունքն իր և այլոց հանդեպ: Հասարակագիտության ուսուցումը կոչված է ձևավորելու ապագա քաղաքացուն՝ հնարավորություն տալով նրան իր առջև ծառացած խնդիրների պատասխանը որոնել ոչ թե տարերայնորեն, այլ՝ օգտագործելով այն բոլոր քաղաքացիական գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, ինչպես նաև արժեքային մոտեցումները և

քաղաքացիական դիրքորոշումները, որոնք նրա սեփականությունն են դառնալու դպրոցական նստարանից:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հասարակագիտության ուսուցումը պետք է ուղղված լինի սովորողների հետևյալ կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝

- վերլուծել, համեմատել, ընդհանրացնել, վերացարկել և համադրել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հիմնախնդիրներ, իրադարձություններ, երևույթներ և փաստեր.
- գնահատել անձի և հասարակության վերաբերյալ տարբեր տեսակետները և ճիշտ կողմնորոշվել դրանց հիմնավորվածության հարցում.
- տարբեր սկզբնաղբյուրներից տեղեկատվություն ընտրել, վերլուծել, եզրակացություններ անել և համապատասխան հղումներ կատարել.
- աշխատել թիմերով, համագործակցել և կարողանալ ներկայացնել ստացած գիտելիքը և կատարած աշխատանքը,
- հանրային կյանքի տարբեր ոլորտներում կիրառել հաղորդակցվելու համարժեք ձևեր.
- հաղորդակցվել ազգային և համաշխարհային քաղաքակրթական արժեքներին.
- կապել կյանքը և ուսումնառությունը՝ համայնքային հիմնախնդիրների ուսումնասիրման միջոցով
- ձևավորել փոխադարձ հարգանքի և փոխօգնության հարաբերություններ մարդկանց հետ առօրյա շփումներում.
- ըմբռնել միջանձնային հարաբերություններում հոգեբանական առողջ մթնոլորտի կարևորությունը, նպաստել դրա ձևավորմանը՝ ընտանիքում, դպրոցում, ընկերական շրջապատում.
- հասկանալ և գնահատել իր հասարակական դերը՝ որպես որոշակի ժամանակաշրջանում և որոշակի տարածության մեջ ապրող քաղաքացի.
- տարբերակել իրավունքի հետ առնչվող խնդիրները, հասկանալ դրանց իրավական ու ոչ իրավական լուծումների տարբերությունը, յուրացնել ու գնահատել օրենքների և օրինականության նշանակությունը, իրավագիտակից, օրինապաշտ և ակտիվ քաղաքացիներ դառնալու համար.
- ստեղծել արդյունավետ միջանձնային հարաբերություններ.
- օգտվել ազգամիջյան և միջազգային համագործակցության փորձից.

- արտահայտել սեփական կարծիքը և այն պաշտպանել հասարակագիտական խնդիրների շուրջ կազմակերպված քննարկումների և բանավեճերի ընթացքում.
- առաջնորդվել հանդուրժողականության սկզբունքներով.
- փնտրել, գտնել և կիրառել ինքնուրույն, այլընտրանքային լուծումներ սոցիալական և հոգեբանական տարբեր իրավիճակներում.
- դրսևորել ստեղծագործական մտածելակերպ.
- ունենալ գործուն քաղաքացիական դիրքորոշում և գործնականում կիրառել ժողովրդավարության սկզբունքները:

ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

8-րդ դասարան
Հասարակագիտության ներածություն

Մարդ և հասարակություն:
Մարդը և նրան շրջապատող բնական ու հասարակական միջավայրը:
Մարդու պահանջմունքները. նյութական և ոչ նյութական պահանջմունքներ:
Հասարակության սոցիալական կազմը. խմբեր, շերտեր, համայնքներ:
Սոցիալական հարաբերություններ և գործընթացներ: Համակեցություն, համագործակցություն և հակամարտություն:
Ընտանիք: Ազգ: Մշակույթ: Ինքնություն և բազմազանություն (ֆիզիկական, մշակութային, կրոնական և այլն):

Հիմնարար արժեքներ
Ազատություն հասկացությունը: Ազատության դրսևորումները և սահմանափակումները: Մարդու հիմնարար ազատություններ և իրավունքներ:
Արդարություն: Արդարության բարոյական կողմերը: Արդարության իրավական կողմերը: Արդարության արտահայտման ձևերը :
Հավասարություն: Սոցիալական հավասարություն:
Իրավահավասարություն: Պատասխանատվություն և հանդուրժողականություն: Պատասխանատվության արժեքն ու անհրաժեշտությունը: Իրավունք և պատասխանատվություն:
Հանդուրժողականության սկզբունքներ:

Իշխանություն
Ինչ է իշխանությունը: Իշխանության գործառույթները:
Առաջնորդություն և հեղինակություն: Ուժ և իշխանություն:
Իշխանության անհրաժեշտությունը, նպատակները:
Իշխանություն և պետություն: Ժողովրդավարական իշխանություն:
Իշխանության տարանջատում:
Կոռուպցիա և իշխանության չարաշահում: Իշխանության մարմինների գործունեության թափանցիկություն և վերահսկողություն:

9-րդ դասարան
Մարդու իրավունքներ և քաղաքացիական կրթություն

Ժողովրդավարական հասարակություն
Ժողովրդավարություն: Սահմանադրականություն: Սահմանադրությունը որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավոր:
Օրենքի և իրավունքի գերակայությունը:
Իրավահավասարություն. փոքրամասնության իրավունքներ, գենդերային իրավահավասարություն:
Ընտրությունները և քաղաքական կուսակցությունների դերը ժողովրդավարության կառուցման գործում:
Հանրային բարիք և անձի ինքնագիտակցություն: Կամավորականության դերը ժողովրդավարական հասարակության մեջ:
ՄԱԿ-ի և միջազգային մարդասիրական կառույցների դերը մարդու իրավունքների և ժողովրդավարության պաշտպանության ու զարգացման գործում:

Հանրային քաղաքականություն
Հանրային քաղաքականության հասկացությունը և մասնակիցները:
Հանրային քաղաքականության գործընթացը և հիմնախնդիրները:
Հանրային քաղաքականության առաջարկ և գործողությունների պլան:

Քաղաքացիություն
Ակտիվ քաղաքացի: Մասնակցություն և առաջնորդություն:
Քաղաքացու իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում:

Քաղաքացիական հասարակություն
Շահերի պաշտպանություն և բազմակարծություն:
Քաղաքացիական հասարակության բաղադրիչներ (հասարակական կազմակերպություններ, միություններ և այլն):
Զանգվածային լրատվության միջոցները և մարդու իրավունքները:

Քաղաքացիական հասարակության տնտեսական բաղադրիչը
Շուկայական տնտեսությունը որպես ազատ ձեռնարկատիրության հենասյուն:
Մրցակցությունն ապահովող մեխանիզմներ: Սպառողների շահերի պաշտպանություն:
Պետության դերը տնտեսության մեջ: Պետության եկամտի աղբյուրները:
Պետական բյուջե:

Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները
Մարդու իրավունքները և բարոյական արժեքները:
Մարդու քաղաքացիական իրավունքներ և ազատություններ:
Քաղաքական իրավունքներ և ազատություններ: Քաղաքական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և ժողովրդավարությունը:
Մարդու և քաղաքացու տնտեսական և սոցիալական իրավունքներ:
Մարդու և քաղաքացու մշակութային իրավունքներ: Մշակութային իրավունքները որպես մարդու հոգևոր զարգացման երաշխիք:
Առանձին խմբերի անձանց իրավունքներ. երեխայի իրավունքներ, հաշմանդամների իրավունքներ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուսումնական գործընթացում, ելնելով՝ թեմայից, դասի նպատակից, դասարանից, քննարկվող հիմնախնդրի ու սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում
- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ
- աշխատանք սկզբնաղբյուրների հետ
- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն
- տեղեկատվական աղբյուրների գնահատում և համադրում
- հիմնախնդիրների հետազոտում
- հանդիպումներ
- մրցույթների անցկացում
- հաշվետվությունների և գրավոր հաղորդումների պատրաստում
- բանավեճի կազմակերպում
- բարձր տեխնոլոգիաների օգտագործում
- աշխատանք գրադարանների հետ, այդ թվում՝ վիրտուալ
- դերային խաղեր
- թղթապանակների պատրաստում, մեկնաբանում
- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում
- անդրադարձ ուսումնական գործունեությանը
- նախագծերի իրականացում
- հանրօգուտ աշխատանքների ծրագրերի իրականացում
- համայնքային հիմնախնդիրների հետազոտում և այլն:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

գիտելիքներ, կարողություններ և հմտություններ

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է՝

8-րդ դասարան	**Հասարակագիտության ներածություն**	
Թեմա	**Ա մակարդակ**	**Բ մակարդակ**
Մարդ և հասարա-կություն	**Հասկանա** բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը, **բացատրի** դրանց փոխհարաբերություն-ները: **Ներկայացնի** մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա:	**Վերլուծի** մարդ, բնություն և հասարակու-թյուն հասկացությունները: **Ներկայացնի** մարդու և հասարակության փոխներգործությունը ժամանակակից կյանքի օրինակներով: **Առաջարկի** բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:
	Թվարկի մարդու պահանջմունքները, **Տարբերի** նյութական և ոչ նյութական պահանջմունքները:	**Ներկայացնի** նյութական և ոչ նյութական պահանջմունքների նշանակությունը իր և հասարակության կյանքում:
	Գաղափար ունենա հասարակության սոցիալական կազմի մասին: **Տարբերակի** հասարակական մեծ և փոքր խմբերն ու շերտերը: **Բացատրի** համայնք հասկացությունը:	**Քննարկի** և **վերլուծի**, թե ինչ դեր ունեն և ինչպես են ազդում հասարակական մեծ և փոքր խմբերն ու շերտերը անհատների և նրանց միջև եղած հարաբերությունների վրա:
	Իմանա *սոցիալական հարաբերություններ և գործընթացներ, համակեցություն,*	**Ներկայացնի** համագործակցությունը և հակամարտությունը որպես հանրային

	համագործակցություն, հակամարտություն հասկացությունները: Համակեցություն, համագործակցություն, հակամարտություն հասկացությունները պարզաբանող **օրինակներ բերի**:	համակեցության բաղադրիչներ:
	Իմանա և **բացատրի** ընտանիք, ազգ, մշակույթ, ինքնություն հասկացությունները: **Ներկայացնի** ազգային մշակույթին իր պատկանելիությունը:	**Հիմնավորի**, որ ընտանիքը հասարակության հիմքն է: **Մեկնաբանի** ընտանիքի և հասարակության բարեկեցության փոխկախվածությունը: **Վերլուծի** և **մեկնաբանի** ինքնություն և մշակույթ հասկացությունների փոխկապ-վածությունը, այլոց մշակութային ժառանգության՝ սեփականից տարբերվելու և առանձին գոյություն ունենալու, տարբեր ազգերի մշակույթի փոխազդեցության ու համակեցության անհրաժեշտությունը: **Հիմնավորի** սեփական և այլ մշակույթների նմանությունների ու տարբերությունների բնականոն լինելը: *Կարողանա կազմել իր համայնքի սոցիալական քարտեզը:*
Հիմնարար արժեքներ	**Իմանա**, թե ինչ է ազատությունը: **Թվարկի** մարդու հիմնարար ազատությունները և իրավունքները: Ազատության դրսևորումների **օրինակներ**	**Տարբերակի** ազատության դրսևորումները և սահմանափակումները: **Նկարագրի** մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանա-

	բերի:	փակման դեպքեր և **վերլուծի** դրանք:
	Բացատրի արդարություն հասկացությունը: **Տարբերի** արդարության բարոյական և իրավական կողմերը: **Ներկայացնի** տարբեր բնագավառներում արդարության արտահայտման ձևերը և **վերլուծի** դրանք:	**Հիմնավորի** արդարության կարևորությունը ժողովրդավարական հասարակության մեջ: **Ունենա** հմտություններ կյանքի տարբեր իրավիճակներում արդարությունը պաշտպանելու և արժանապատվորեն հանդես գալու համար:
	Իմանա հավասարություն հասկացությունը: **Ներկայացնի** հավասարության դրսևորումները (սոցիալական հավասարություն, իրավահավասարություն և այլն) և **խմբավորի** դրանք:	**Համեմատի** սոցիալական հավասարությունն ու իրավահավասարությունը, **բացահայտի** սոցիալական հավասարության ու իրավահավասարության դրսևորումները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:
	Իմանա, թե ինչ է պատասխանատվությունը և ինչու է այն անհրաժեշտ: **Տարբերի** պատասխանատվություն ստանձնելու առավելություններն ու դժվարությունները: **Ներկայացնի** իրավունքի, պատասխանատվության և հանդուրժողականության կապը:	**Ձևավորի** և **դրսևորի** պատասխանատվության զգացում սեփական գործողությունների հանդեպ: **Մեկնաբանի** իր որոշումների կայացման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի անհրաժեշտությունը: **Կշռադատի** պատասխանատվություն ստանձնելու դրական և թվացյալ բացասական հետևանքները: *Կարողանա ներկայացնել քվեարկությունը որպես իրավունք, պահանջ և պատասխանատվություն:*
Իշխանություն	**Իմանա,** թե ինչ է իշխանությունը, դրա անհ-	**Մեկնաբանի** իշխանության ճյուղերի

	ռաժեշտությունը, և որոնք են իշխանության աղբյուրները: **Իմանա** և **բացատրի** պետական իշխանության ձևավորման սկզբունքները, իշխանության ճյուղերի (օրենսդիր, գործադիր, դատական) խնդիրները և գործառույթները: **Ներկայացնի** պետական իշխանության ձևավորման և գործունեության ազդեցությունը անհատի վրա: **Բացատրի** *ժողովրդավարական իշխանություն* հասկացությունը:	տարանջատման սկզբունքի հիմնարար նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում: **Ներկայացնի** առաջնորդություն և հեղինակություն հասկացությունների փոխկապվածությունը, հեղինակության անհրաժեշտությունը առաջնորդի ընտրության և առաջնորդության իրագործման համար: **Վերլուծի** ուժի և իշխանության, իրավունքի և պատասխանատվության փոխկապվածությունը: *Կարողանա ներկայացնել և խմբային քննարկումներում պաշտպանել հանրային հետաքրքրություն ներկայացնող (համայնքային, դպրոցական և այլն) որևէ նախագիծ:*
	Իմանա կոռուպցիա հասկացությունը: **Ներկայացնի** կոռուպցիայի պատճառները և ձևերը, *թրաֆիքինգ* հասկացությունը: **Հիմնավորի** իշխանության մարմինների գործունեության թափանցիկության ապահովման և դրա նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը:	Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կոռուպցիայի **դեպքեր նկարագրի** և **հիմնավորի** դրանց բացասական ազդեցությունը տվյալ ոլորտի զարգացման վրա**:** **Վերլուծի** կոռուպցիայի և թրաֆիքինգի առնչությունները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: *Կարողանա ուսումնասիրել և գնահատել իշխանության որևէ մարմնի, հաստատության գործունեություն:*

9-րդ դասարան	Մարդու իրավունքներ և քաղաքացիական կրթություն	
Ժողովրդավարական հասարակություն	**Իմանա** *ժողովրդավարություն* և *սահմանադրություն* հասկացությունները, ՀՀ Սահմանադրության մեջ մարդու իրավունքներին առնչվող հոդվածները: **Ներկայացնի** ժողովրդավարության հիմնարար արժեքները, սկզբունքները և ժողովրդավարական գործելակերպը:	**Ներկայացնի** ժողովրդավարությունը և սահմանադրականությունը որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավոր: **Վերլուծի** ժողովրդավարության առավելությունները և դժվարությունները: *Կարողանա նկարագրել և համեմատել դասարանային կանոնների ընդունումը որպես ժողովրդավարական գործընթաց:*
	Իմանա, թե ինչ է օրենքի և իրավունքի գերակայությունը: **Բացատրի** *օրենքի կիրարկում* հասկացությունը: **Ներկայացնի** օրենքների և այլ իրավական ակտերի դերը փոքրամասնության իրավունքների, գենդերային իրավահավասարության և մարդու այլ հիմնարար իրավունքների պահպանման գործում:	**Մեկնաբանի** օրինականության դերը ժողովրդավարության և իրավական պետության կայացման խնդրում: Որևէ օրենքի օրինակով **դատողություններ անի** օրենքների ընդունման և դրանց փաստացի կիրառման վերաբերյալ, **վերլուծի** օրենքի կիրառման արդյունավետությունը:
	Բացատրի ազատ և արդար ընտրությունների կարևորությունը իր և հասարակության համար: **Ներկայացնի** քաղաքական կուսակցություն-	**Ներկայացնի** ազատ ընտրությունը որպես քվեարկության միջոցով որոշումներ կայացնելու ձև: **Վերլուծի** ընտրություններին գիտակցված

	ները որպես ժողովրդավարական հասարակության մեջ հանրության տարբեր խմբերի շահերը ներկայացնող միջոց: Կարողանա հիմնավորել սեփական տեսակետը:	մասնակցության ազդեցությունը ժողովրդավարական հասարարկության կայացման գործում: *Կարողանա ուսումնասիրել և գնահատել ընտրություններին մասնակից կուսակցություններից մեկի նախընտրական քարոզչությունը՝ տեսաժապավեններ, պաստառներ, գրքույկներ և այլն:*
	Բացատրի հանրային բարիքի ստեղծման մեջ անհատի ինքնագիտակցության և պատասխանատվության կարևորությունը: Կամավորական աշխատանքի (համայնքում, դպրոցում և այլն) **օրինակներ բերի**:	**Հիմնավորի** ժողովրդավարական իշխանությունը որպես հանրային բարիքի ստեղծման երաշխավոր: **Դատողություններ անի** ժողովրդավարական հասարակության մեջ կամավորականության անհրաժեշտության վերաբերյալ :
	Իմանա Միավորված ազգերի կազմակերպության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և եվրոպական կառույցների (Եվրոպական միություն, Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն և այլն) դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում: *Մամուլի, զանգվածային լրատվության այլ միջոցների ուսումնասիրության հիման վրա* ***ներկայացնի*** *Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կամ այլ միջազգային մարդասիրական կառույցի գործունեությունը, այդ կառույցի դերը*	**Վերլուծի** Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի կամ միջազգային որևէ այլ փաստաթղթի բովանդակությունը մարդու իրավունքների պաշտպանության առումով: **Փաստարկված դատողություններ** անի միջազգային մարդասիրական կառույցների գործունեության վերաբերյալ:

	բացահայտող ***օրինակ բերի***:	
Հանրային քաղաքականություն	**Իմանա** *հանրային քաղաքականություն* հասկացությունը: **Ներկայացնի** հանրային քաղաքականության մասնակիցներին, այդ քաղաքականության գործընթացում քաղաքացիների մասնակցության կարևորությունը: **Հասկանա** իշխանության դերը հանրային քաղաքականության ձևավորման մեջ:	**Բացահայտի** հանրային քաղաքականության հիմնախնդիրներ, **ուսումնասիրի** որևէ հիմնախնդիր, **առաջարկի** այդ հիմնախնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ: **Մշակի** և **ներկայացնի** հանրային քաղաքականության իրականացման գործողությունների պլան:
Քաղաքացիություն	**Իմանա** *քաղաքացիություն* հասկացությունը: **Բացատրի** քաղաքացու, քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում: **Ներկայացնի** ակտիվ քաղաքացու հատկանիշներ:	**Մեկնաբանի** մասնակցությունն ու առաջնորդությունը որպես քաղաքացիական դիրքորոշման բնութագրիչներ: **Առաջարկի** քաղաքացու պատասխանատու մասնակցության բնութագրիչներ և վերլուծի դրանք:
Քաղաքացիական հասարակություն	**Իմանա** քաղաքացիական հասարակություն հասկացությունը: **Ներկայացնի** քաղաքացիական հասարակության բաղադրիչները (խոսքի ազատություն, բազմակարծություն, հասարակական կազմակերպություններ, միություններ և այլն):	**Հասկանա** և **բացատրի** հասարակական կազմակերպությունների, միությունների և այլ կազմակերպությունների տեղն ու դերը քաղաքացիական հասարակության մեջ շահերի պաշտպանության, բազմազանության և բազմակարծության ապահովման առումով: **Հիմնավորի** հասարակական կարծիքի և խոսքի, մտքի, խղճի ազատության

		կարևորությունը:
	Իմանա *զանգվածային լրատվության միջոցներ* հասկացությունը: **Ներկայացնի** զանգվածային լրատվամիջոցների դերը քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում:	**Հիմնավորի** տեղեկացվածության կարևորությունը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում: *Համայնքային հիմնախնդիրներն* ***ուսումնասիրի*** *քաղաքացիական հասարակության հաստատությունների և զանգվածային լրատվության միջոցների միջոցով:*
Քաղաքացիական հասարակության տնտեսական բաղադրիչը	**Բացատրի** շուկայական տնտեսության մեջ արտադրողների և սպառողների փոխկապվածությունը: **Նկարագրի** սպառողների պահանջարկի վրա ազդող գործոնները, մրցակցությունն ապահովող մեխանիզմներ:	**Ներկայացնի** շուկայական տնտեսությունը որպես ազատ ձեռնարկատիրության հենասյուն: **Մեկնաբանի** տնտեսության պետական կառավարման անհրաժեշտությունը: *Սպառողների իրավունքների խախտման, պետության կողմից հակամենաշնորհային քաղաքականության իրականացման* ***օրինակներ բերի:***
	Բացատրի պետության դերը ազատ շուկայական տնտեսության մեջ, պետության եկամտի աղբյուրները:	**Ներկայացնի** հարկերի և պետական բյուջեի փոխկապվածությունը: **Մեկնաբանի** անհատի տնտեսական անկախությունը որպես քաղաքացիական հասարակության կայացման պայման: ***Ուսումնասիրի*** *ընտրված հանրային հիմնախնդրի լուծման համար նախատեսված պետական ֆինանսական միջոցները և եզրահանգումներ անի:*

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները	**Իմանա** մարդու իրավունքների բարոյական հիմքերը: **Ներկայացնի** մարդու իրավունքների սահմանափակման հիմքերը:	**Հիմնավորի** մարդու իրավունքների բարոյական հիմքերը: **Վերլուծի** մարդու իրավունքների, բարոյականության և օրենքի կապը:
	Իմանա մարդու քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:	Օրինակներով **վերլուծի մարդու** քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:
	Թվարկի մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները: **Ներկայացնի** մարդու քաղաքական իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդիրը:	**Մեկնաբանի** մարդու անձնական և քաղաքական իրավունքների կապը: **Բացատրի** մարդու քաղաքական իրավունքների ու ազատությունների պաշտպանության և ժողովրդավարական հասարակության կայացման փոխկապվածությունը:
	Իմանա մարդու տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքները: **Ներկայացնի** մշակութային իրավունքների պաշտպանությունը որպես մարդու հոգևոր զարգացումը և մշակութային բազմազանությունը խթանող գործոն:	**Մեկնաբանի** մարդու տնտեսական, սոցիալական,մշակութային իրավունքների տեղը այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների շարքում:
	Իմանա երեխայի իրավունքների մասին, հաշմանդամների իրավունքների մասին ՀՀ օրենքների հիմնական պահանջները:	**Ներկայացնի** երեխայի իրավունքների և հաշմանդամների իրավունքների մասին միջազգային փաստաթղթերի հիմնական պահանջները:

Արժեքային համակարգ

Հասարակագիտության ուսումնասիրության շնորհիվ սովորողը պետք է՝

- կարևորի իր դերը և պատասխանատվությունը հասարակության զարգացման գործընթացում
- կարևորի սեփական ինքնությունը և դրա բաղկացուցիչ մասերը
- գիտակցի բազմազան, ներդաշնակ, մաքուր և անվտանգ բնական միջավայրի կարևորությունը
- արժևորի տարբեր մշակույթների նմանություններն ու տարբերություն-ները
- գիտակցի համամարդկային հիմնարար արժեքների կարևորությունը
- արժևորի պատասխանատվությունը և արդարությունը, ազատությունը, հավասարությունը, հանդուրժողականությունը՝ որպես ներդաշնակ հասարակական կյանքի հիմնական պայման
- արժևորի մարդկանց տարիքային, սեռային տարբերությունները և առանձնահատկությունները
- գիտակցի համակեցության կարևորությունը հասարակական կյանքի բնականոն զարգացման գործում, նպաստի հանրային բարիքի զարգացմանը
- հարգալից վերաբերմունք դրսևորի ազգային, մշակութային և ռասայական տարբերությունների նկատմամբ
- գիտակցի պատասխանատվություն ստանձնելու կարևորությունը
- արժևորի հասարարակական կյանքին մարդու գործուն և նպատակային մասնակցությունը
- գնահատի սեփական կարծիքի, գիտելիքի և համոզմունքի դերը կյանքում
- արժևորի արդյունավետ հաղորդակցման կարևորությունը բախումների հաղթահարման գործում
- կարևորի մարդու իրավունքների, բարոյականության և օրենքի կապը
- արժևորի մարդու իրավունքներն ու պարտականությունները
- արժևորի անձնական ազատության և արդարության գաղափարները
- կարևորի տնտեսական և սոցիալական իրավունքների կապը այլ հիմնարար իրավունքների և ազատությունների հետ

- կարևորի մշակութային իրավունքների տեղը այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների շարքում
- արժևորի գենդերային հավասարությունը՝ բացառելով սեռային խտրականությունը
- կարևորի հաշմանդամների և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը
- գնահատի հրապարակայնության և խոսքի ազատության, լրատվամիջոցների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում
- կարևորի ընտրություններին իր անձնական մասնակցության նշանակությունը
- կարևորի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները
- գնահատի ժողովրդավարության և ազատության կարևորությունը իր և հասարակության համար
- գիտակցի օրենքի գերակայության, արդարության և օրենքի առջև բոլորի հավասարության կարևորությունը
- գիտակցի քաղաքացիական մասնակցության կարևորությունը
- գնահատի իշխանության ճյուղերի տարանջատման կարևորությունը
- կարևորի համայնքային հիմնախնդիրների լուծման գործում իր և ուրիշների մասնակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ փաստաթղթեր

1. <<Կրթության մասին>> ՀՀ օրենք:
2. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենք:
3. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2011:

Ուսումնական և ուսումնամեթոդական գրականություն

1. Իրավունք. մարդու իրավունքներ, քաղաքացիական կրթություն, պետություն և իրավունք, մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, 8-10-րդ դասարաններ, Հարությունյան Ն., Վաղարշյան Ա., Տիգրան Մեծ, Երևան, 2001:
2. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, ձեռնարկ մանկավարժների համար, Խաչատրյան Ս. և ուրիշներ, Տիգրան Մեծ, Երևան, 2005:
3. Հասարակագիտության ինտեգրված ուսուցում, Պետրոսյան Ս. և ուրիշներ, Լուսաբաց, Երևան, 2006:
4. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ. ուսումնական ձեռնարկ 8(9)-րդ դասարանների համար, Խաչատրյան Ս. և ուրիշներ, Էդիթ Պրինթ, Երևան, 2005:
5. Միջազգային մարդասիրական իրավունք, Հանս Պիտեր Գասեր, Ներածություն, ԿԽՄԿ, Երևան, 2003:
6. Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի. մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար: Էդիթ Պրինտ, Երևան, 2010:
7. Քաղաքացիական կրթությունը VII դասարանում: Ձեռնարկ ուսուցիչների համար, Մկրտչյան Մ. և ուրիշներ, Երևանի պետական համալսարան, Երևան, 2000:
8. Հասարակագիտության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Թովմասյան Տ. և ուրիշներ, Տիգրան Մեծ, Երևան, 2007:
9. Ուսումնասիրենք ժողովրդավարությունը, կառավարումը և ընտրությունները: Քաղաքացիական և ընտրական կրթության ուսումնամեթոդական ձեռնարկ, International IDEA և Կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2007:
10. Քաղաքացի նախագիծ – համայնքային հիմնախնդիրների հետազոտման ուսումնական նախագիծ, Սիվիտաս, Երևան, 2009:
11. Введение в обществознание. Учебное пособие для 8-9 кл. общеобразоват. учреждений. Под ред. А.Н.Боголюбова. Москва, Просвещение, 1996.
12. Человек и общество. Учебное пособие по обществознанию для учащихся 10-11 кл. общеобразоват. учреждений. Под ред. А.Н.Боголюбова, А.Ю.Лазебниковой, Москва, Просвещение, 1996, 2011.

13. Введение в политологию, Учебное пособие для 10-11 кл. общеобразоват. учреждений. Гаджиев К.С., Каменская Т.В., Родионов А.Н., 3-е издание Москва, Просвещение, 1998.
14. Человек, 9 кл. Пособие для общеобразоват. учреждений, Гуревич П.С., 2-е изд. Москва, Дрофа, 1997.
15. Граждановедение. Учебное пособие для учащихся 9 классов, их родителей и учителей. Соколов Я. и Прутченков А., Москва, “Гражданин”, 1997.
16. Методика гражданского образования, Иоффе А., Сивитас, Брянск, 2007.
17. О человеческом в человеке, под ред. И.Т.Фролова, Москва, Политиздат, 1991.
18. Гобозов, И.А., Введение в философию истории, 2-е издание, Москва, ТЕИС, 1999.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

<<ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>

ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(8-9-րդ դասարաններ)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Միջին դպրոցում հասարակագիտության դասավանդման հիմնական խնդիրներն են՝

- ծանոթացնել մարդուն և հասարակությանը վերաբերող հիմնական հասկացություններին, հիմնախնդիրներին,
- գաղափար տալ միջանձնային հարաբերությունների մասին, զարգացնել հաղորդակցվելու հմտություններ,
- ներկայացնել որոշ հիմնարար հասկացություններ, ինչպիսիք են՝ ազատությունը, պատասխանատվությունը, արդարությունը, հանդուրժողականությունը և այլն,
- ծանոթացնել մարդու իրավունքների գաղափարին, ներկայացնել իրավունքների տեսակները,
- գաղափար տալ մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության և երաշխիքների մասին,
- ծանոթացնել իշխանության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության գաղափարներին, ներկայացնել դրանց փոխադարձ կապը,
- համակարգված պատկերացում ձևավորել քաղաքացիական հասարակության մասին,
- ներկայացնել համայնքային հիմնախնդիրների հետազոտման նախագծեր և այլն:

Ծրագրում ընդգրկված թեմաների դասավանդման ընթացքում ներառված են գործնական աշխատանքներ:

<<Հասարակագիտություն>> առարկայի դասավանդմանը 8-9-րդ դասարաններում հատկացվում է շաբաթական մեկ ժամ, տարեկան՝ 34 ժամ, ընդամենը՝ 68 ժամ:

<<ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>

I. Հասարակագիտության ներածություն
(8-րդ դասարան, 34 ժամ)

Թեմա 1. Մարդ և հասարակություն (8 ժամ)
Մարդը և նրան շրջապատող բնական ու հասարակական միջավայրը:
Մարդու պահանջմունքները. նյութական և ոչ նյութական պահանջմունքներ:
Հասարակության սոցիալական կազմը. խմբեր, շերտեր, համայնքներ:
Սոցիալական հարաբերություններ և գործընթացներ: Համակեցություն, համագործակցություն և հակամարտություն:
Ընտանիք: Ազգ: Մշակույթ: Ինքնություն և բազմազանություն (ֆիզիկական, մշակութային, կրոնական և այլն):
Գործնական աշխատանք - Համայնքի սոցիալական քարտեզի կազմում:

Թեմա 2. Հիմնարար արժեքներ (9 ժամ)
Ազատություն հասկացությունը: Ազատության դրսևորումները և սահմանափակումները:
Մարդու հիմնարար ազատություններ և իրավունքներ:
Արդարություն: Արդարության բարոյական կողմերը: Արդարության իրավական կողմերը:
Արդարության արտահայտման ձևերը (բաշխման, ուղղման, ընթացակարգի):
Հավասարություն: Սոցիալական հավասարություն: Իրավահավասարություն:
Պատասխանատվություն և հանդուրժողականություն: Պատասխանատվության արժեքն ու անհրաժեշտությունը: Իրավունք և պատասխանատվություն:
Հանդուրժողականության սկզբունքներ:
Գործնական աշխատանք: Քվեարկությունը որպես իրավունք, պահանջ և պատասխանատվություն:
Կրկնություն (1 ժամ)

Թեմա 3. Իշխանություն (9 ժամ)
Ինչ է իշխանությունը: Իշխանության գործառույթները (միավորել, կազմակերպել, կառավարել):
Առաջնորդություն և հեղինակություն: Ուժ և իշխանություն:
Իշխանության անհրաժեշտությունը, նպատակները:
Իշխանություն և պետություն: Ժողովրդավարական իշխանություն: Իշխանության տարանջատում:
Կոռուպցիա և իշխանության չարաշահում: Իշխանության մարմինների գործունեության թափանցիկություն և վերահսկողություն:
Գործնական աշխատանք: Իշխանության ներկայացուցչի գործունեության ուսումնասիրում և գնահատում:
Կրկնություն (1 ժամ)
Ամփոփում (2 ժամ)
Պահուստային ժամեր (4 ժամ)

II. Մարդու իրավունքներ և քաղաքացիական կրթություն

(9-րդ դասարան, 34 ժամ)

1. Ժողովրդավարական հասարակություն (6 ժամ)

Ժողովրդավարություն: Սահմանադրականություն: Սահմանադրությունը որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավոր:
Օրենքի և իրավունքի գերակայությունը:
Իրավահավասարություն. փոքրամասնության իրավունքներ, գենդերային իրավահավասարություն:
Ընտրությունները և քաղաքական կուսակցությունների դերը ժողովրդավարության կառուցման գործում:
Հանրային բարիք և անձի ինքնագիտակցություն: Կամավորականության դերը ժողովրդավարական հասարակության մեջ:
ՄԱԿ-ի և միջազգային մարդասիրական կառույցների դերը մարդու իրավունքների և ժողովրդավարության պաշտպանության ու զարգացման գործում:
Գործնական աշխատանք: Ժողովրդավարական ընտրությունների կազմակերպում:

2. Հանրային քաղաքականություն (4 ժամ)

Հանրային քաղաքականության հասկացությունը և մասնակիցները:
Հանրային քաղաքականության գործընթացը և հիմնախնդիրները:
Հանրային քաղաքականության առաջարկ և գործողությունների պլան:
Գործնական աշխատանք: Հանրային քաղաքականության հիմնախնդիրների բացահայտում, ուսումնասիրություն և այլընտրանքային քաղաքականության մշակում:

3. Քաղաքացիություն (3 ժամ)

Ակտիվ քաղաքացի:
Մասնակցություն և առաջնորդություն:
Քաղաքացու իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում:
Գործնական աշխատանք: Քաղաքացու պատասխանատու մասնակցության բնութագրիչների ուսումնասիրում:

4. Քաղաքացիական հասարակություն (3 ժամ)

Շահերի պաշտպանություն և բազմակարծություն:
Քաղաքացիական հասարակության կառույցներ (հասարակական կազմակերպություններ, միություններ և այլն):
Զանգվածային լրատվության միջոցները և մարդու իրավունքները:
Գործնական աշխատանք: Համայնքային հիմնախնդիրների ուսումնասիրում՝ քաղաքացիական հասարակության հաստատությունների և զանգվածային լրատվության միջոցների միջոցով:

Կրկնություն (1 ժամ)

5. Քաղաքացիական հասարակության տնտեսական բաղադրիչը (4 ժամ)

Շուկայական տնտեսությունը որպես ազատ ձեռնարկատիրության հենասյուն: Մրցակցությունն ապահովող մեխանիզմներ: Սպառողների շահերի պաշտպանություն: Պետության դերը տնտեսության մեջ: Պետության եկամտի աղբյուրները: Պետական բյուջե:
Գործնական աշխատանք: Ընտրված հանրային հիմնախնդրի լուծման համար նախատեսված պետական բյուջերի ուսումնասիրում:

6. Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները (7 ժամ)
Մարդու իրավունքները և բարոյական արժեքները:
Մարդու քաղաքացիական իրավունքներ և ազատություններ:
Քաղաքական իրավունքներ և ազատություններ: Քաղաքական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և ժողովրդավարությունը:
Մարդու և քաղաքացու տնտեսական և սոցիալական իրավունքներ:
Մարդու և քաղաքացու մշակութային իրավունքներ: Մշակութային իրավունքները որպես մարդու հոգևոր զարգացման երաշխիք:
Առանձին խմբերի անձանց իրավունքներ. երեխայի իրավունքներ, հաշմանդամների իրավունքներ:
Գործնական աշխատանք: Օրենսդրական փաստաթղթի վերլուծություն՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համատեքստում:

Կրկնություն ***(1 ժամ)***
Ամփոփում ***(2 ժամ)***
Պահուստային ժամեր ***(3 ժամ)***